Հավելված N 2
ՀՀ կառավարության 2022 թվականի
դեկտեմբերի 29-ի N 2103 - Ն որոշման

«Հավելված N 8
ՀՀ կառավարության 2014 թվականի
հուլիսի 3-ի N 710 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ, ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ԴԵՊՔԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն իրավական ակտով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում, պետական պահպանության ծառայությունում զինվորական ծառայության պաշտոններ զբաղեցնողների (այսուհետ՝ զինծառայողներ) և քրեակատարողական ծառայության ծառայողների (այսուհետ՝ քրեակատարողական ծառայողներ) ամսական լրավճարների դեպքերը, լրավճարների վճարման հետ կապված հարաբերությունները:

2. Զինծառայողների և քրեակատարողական և ծառայողների ամսական լրավճարները սահմանվում են մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը փաստացի հաշվարկված պաշտոնային դրույքաչափի, զինվորական (հատուկ) կոչման դրույքաչափի, նշված դրույքաչափերի նկատմամբ հաշվարկված զինծառայության ստաժի հավելավճարի, 20 տարվա զինծառայության ստաժ ունեցողների և ծառայությունը շարունակողների հավելավճարի, պարենի փոխհատուցման, ամսական լրավճարի, միանվագ դրամական օգնությունների և արձակուրդային վճարի ընդհանուր հանրագումարի և օրենքով սահմանված կարգով 2014 թվականի հուլիսի 1-ից հաշվարկվող պաշտոնային դրույքաչափի միջև դրական տարբերություն լինելու դեպքում՝ տարբերության չափով:

3. Զինծառայողների և քրեակատարողական ծառայողների ամսական լրավճարները հաշվարկվում են ըստ պաշտոնների խմբերի ու զինծառայության ստաժի մակարդակների՝ ամսական պարբերականությամբ և վճարվում են պաշտոնային դրույքաչափի հետ միաժամանակ։»։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

30.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ